(19) **ԱՄ**

(51) **ՄԱԴ (2023.01)**
E21C 45/00
E02F 3/00

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գրասենյակ


ԳՅՈՒՏԻ ԼՐԻՎ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ (11) 793 Y

(21) Հայտի համարը **AM20220052Y**
(22) Հայտի Ներկայացման թվականը **19.05.2022**
(45) Հրապարակման ամսաթիվը **16.02.2023**
(56) **US N 3 799 614, E 21C 45/00, 1974**
(72) Գյուտի հեղինակը, երկրի կոդը **Լևոն Մանուկյան (AM), Կարեն Հարությունյան (AM), Տիգրան Մանուկյան (AM), Մերի Գևորգյան (AM)**

(71) Հայտատուն, երկրի կոդը **«Գեոինժինիրինգ» ՍՊԸ (AM)**
(73) Արտոնագրատեր, հասցեն, երկրի կոդը
«Գեոինժինիրինգ» ՍՊԸ (AM)

(54) Գետային տիպի պոչամբարներից նստվածքների հեռացման սարք

(57) Գյուտը վերաբերում է լեռնահանքային արդյունաբերությանը, մասնավորապես՝ գետային տիպի պոչամբարներից նստվածքների հեռացման սարքերին և կարող է օգտագործվել պոչամբարներից պոչային նստվածքների հեռացման համար: Սարքն ունի պոչամբարի տարածքում տեղակայված անշարժ հենասյուներ, գլխավոր ճոպաններով դրանց ամրակցված աշխատանքային հարթակ և դրա տակ ուղղաձիգ տեղաշարժման հնարավորությամբ տեղակայված սյունավոր հիմքով աշտարակ, որի վերևի մասն իրականացված է սյուների միջև տեղակայված սուզարկղի տեսքով: Դրանց ուղղաձիգ տեղաշարժն ապահովող՝ աշխատանքային հարթակի վրա տեղակայված ձգիչ կարապիկներ, որոնց ճոպանների ազատ ծայրերն ամրացված են աշտարակի իրանի վերին մասին: Սուզարկղի ստորին մասում տեղակայված ապառախյուսային պոմպ՝ դրան միացված ապարախյուսի հեռացման խողովակաշարով, սուզարկղի կողմերում և սյուների ստորին եզրերում տեղակայված բարձր ճնշման կցափողեր և դրանց միացված ջրի մատակարարման խողովակաշար: Գլխավոր ճոպանները ձգված են միմյանց զուգահեռ՝ մեկ հորիզոնական հարթության մեջ, իսկ աշխատանքային հարթակն իրականացված է ճոպանների երկայնքով տեղաշարժման հնարավորությամբ սայլակի տեսքով, որն անիվներով հենված է գլխավոր ճոպանների վրա, ընդ որում, սարքը լրացուցիչ ունի քարշափոխադրիչ կարապիկի տեսքով իրականացված շարժաբեր, որը տեղակայված է միևնույն կողմում գտնվող անշարժ հենասյուների մոտակայքում և որի շարժաբեր ճոպանը ձգված է անշարժ հենասյուների միջև՝ գլխավոր ճոպաններին զուգահեռ ու կոշտ ամրակցված է աշխատանքային հարթակին: Ընդ որում որպես անշարժ հենասյուներ օգտագործվում են պոչերի հեռացման արդյունքում մերկացող ջրահեռացման երկաթբետոնե աշտարակները: Բարձրացվում է պոչամբարներից պոչային նստվածքների հեռացման համար կիրառվող սարքի աշխատանքի անվտանգությունն ու արդյունավետությունը, 4 նկ.:



Նկ. 2